ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/3-17/14-2>>

ք. Երևան <<29>> մարտի. 2017թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն ՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ. Նիկողոսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման (ավտոմեքենաների վերանորոգման) ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի (մեկ ամսվա) կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է ոչ ավելի քան 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա (հավելված N2) վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան տվյալ 25.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, իսկ սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի աղյուսակ 1-ի 3-րդ և աղյուսակ 2-ի 4-րդ կետերով սահմանված որակի պահանջները խախտելու յուրաքանչյուր դեպքում՝ սույն պայմանագրի տվյալ տարվա համար նախատեսված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **19** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարության աշխատակազմ	«Գարանտսերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք	ք.Երևան, Թբիլիսյան խճ. N20
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011022085	Հ/Հ 193004674290
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 00840437
էլ. հասցեն՝ gnumner@gov.am	էլ. հասցեն՝ hyundaigarant@yahoo.com
	հեռ. 28-54-47
/ Դ. Բեգլարյան /	/ Մ. Նիկոլոյան /
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
<<29>> մարտի 2017թ. կնքված
N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/3-17/14-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում

Հ/Հ	SU-1,SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշը (տեսակը) Հյունդաի County 3.5լ-3.9լ. ավտոբուս
1	2	3
		Գնացուցակ /ՀՀ դրամ/
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը	
1	Բռնկման համակարգի ստուգում	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0
3	Յուղման համակարգի ստուգում	0
4	Արտացման համակարգի ստուգում	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0
13	ABS համակարգի ստուգում	
14	էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	5000
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	5000
16	Թափքի վիճակի ստուգում	0
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումը	
18	Շարժիչի հանում և տեղադրում	60000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	1000
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	1000
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	
22	Շարժիչի վերանորոգում	250000
23	Նույնը DOHC դեպքում	1000
24	Նույնը V6-ի դեպքում	1000
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	6000
26	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	1000
27	Նույնը աջի համար (V6)	100
28	Նույնը ձախի համար (V6)	100
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	50000
30	Նույնը աջի համար (V6)	100
31	Նույնը ձախի համար (V6)	100
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	100

33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	60000
34	Փականի խցուկի փոխարինում	25000
35	Նույնը V6-ի դեպքում	100
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	100
37	Նույնը V6-ի ձախի դեպքում	100
38	Նույնը V6-ի աջի դեպքում	100
39	Նույնը DOHC դեպքում	100
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	17000
41	Հրիչների փոխարինում DOHC	5000
42	Նույնը DOHC դեպքում	100
43	Ատամնավոր փոկի փոխարինում	
44	Նույնը DOHC դեպքում	100
45	Նույնը V6-ի դեպքում	100
46	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	5000
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	100
48	Նույնը DOHC դեպքում	100
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	100
50	Նույնը V6-ի դեպքում	100
51	Նույնը կոնդիցիոների դեպքում	100
52	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	2000
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	
54	Մխոցային օղակների փոխարինում	25000
55	Նույնը DOHC դեպքում	100
56	Նույնը V6-ի դեպքում	100
57	Թափանիվի հանում և տեղադրում	2000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
58	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	2000
59	Յուղի պոմպի փոխարինում	2000
60	Նույնը DOHC դեպքում	100
61	Նույնը V6-ի դեպքում	100
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում	25000
63	Բռնկման կարգավորում	3000
64	CO կարգավորում	3000
65	Օդի զտիչի փոխարինում	1000
66	Սրահի զտիչի փոխարինում	2000
67	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	
68	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	
69	Վառելիքի մղիչի փոխարինում	6000
70	Վառելիքի զտիչի փոխարինում	5000
71	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	10000
	3. Սառեցման և արտածման համակարգ	
72	Հովհարի փոկի հանում և տեղադրում	3000
73	Հովհարի հանում և տեղադրում	8000
74	Ռադիատորի հանում և տեղադրում	15000
75	Նույնը կոնդիցիոների դեպքում	100
76	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	
77	Ռադիատորի վերանորոգում	50000
78	Թերմոստատի փոխարինում	6000
79	Ջրի պոմպի փոխարինում	22000
80	Նույնը DOHC և V-6 դեպքում	100

81	Նույնը կոնդիցիոների դեպքում	100
82	Ջրի պոմպի վերանորոգում	100
83	Նույնը DOHC դեպքում	1000
84	Նույնը կոնդիցիոների դեպքում	1000
85	Ընդարձակող բաքի փոխարինում	2000
86	Խլարարի հանում և տեղադրում	11000
87	Նույնը DOHC դեպքում	1000
88	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	2000
89	Սրահի զտիչի փոխարինում	2000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
90	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	8000
91	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	8000
92	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	24000
93	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	2000
94	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	
95	ՓՏ-ի հանում և տեղադրում	40000
96	ՓՏ-ի վերանորոգում	50000
97	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	1000
98	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	20000
99	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	4000
100	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	
101	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	
102	Նույնը V6-ի համար	
103	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	
104	Նույնը V6-ի համար	
105	ԱՓՏ-ի վերանորոգում	
106	Նույնը V6-ի համար	
107	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
108	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	
109	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	
110	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	
111	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	8000
112	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	18000
113	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	7000
114	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	7000
	6. Առջևի և հետևի կամրջակներ	
115	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	25000
116	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	35000
117	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	25000
118	Առջևի կամ հետևի կամրջ. կիսասռնու հանում և տեղադր.	15000
119	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	3000
	7. Կախոց	
120	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	20000
121	Տրավերսի հանում և տեղադրում	10000
122	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	
123	Անվակունդի առանցքակալի փոխարինում	10000
124	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	100
125	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	10000
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	100

127	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	
128	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	
129	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	6000
130	Զսպանակի հանում և տեղադրում	
131	Զսպակի հանում և տեղադրում	8000
132	Զսպակի վռանների փոխարինում	15000
133	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	9000
134	Ներքևի լծակի հանում և տեղադրում	9000
135	Ներքևի լծակի վռանների փոխարինում	9000
136	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	7000
137	Միջին ձգանի հանում և տեղադրում	7000
138	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	1000
139	Վերևի լծակի հանում և տեղադրում	17000
140	Վերևի լծակի վռանների փոխարինում	9000
141	Գնդե հոդակապերի փոխարինում	
142	Ծայրակաների հանում և տեղադրում	7000
143	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	8000
144	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	5000
145	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	1000
146	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	5000
147	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	5000
148	Հետևի զսպանակի փոխարինում	9000
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	9000
150	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	
151	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	6000
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	1000
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	1000
155	Անվաբացքի կարագավորում	5000
156	Ջոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	2000
	8. Ղեկային մեխանիզմ	
157	Ղեկային կալունի հանում և տեղադրում	25000
158	Նույնը V6-ի համար	100
159	Ղեկային կալունի վերանորոգում	50000
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	100
161	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	100
162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	8000
163	Նույնը DOHC դեպքում	100
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	4000
165	Նույնը DOHC դեպքում	100
166	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	6000
167	Նույնը DOHC դեպքում	100
168	Նույնը կոնդիցիոների դեպքում	100
169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	100
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	100
	9. Արգելակային համակարգ	
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում	7000
172	Գլխ. գլանի վերանորոգում	9000
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	8000
174	Բանվ. գլանի հանում և տեղադրում	9000

175	Բանվ. գլանի վերանորոգում	8000
176	Արգելակային համակարգի օդահանում	3000
177	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	
178	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	
179	Առջևի սուպպորտի վերանորոգում	
180	Հետևի սուպպորտի վերանորոգում	
181	Արգելակային փողրակի փոխարինում	5000
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	10000
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	
184	Հետևի կոճղակների փոխարինում	7000
185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	8000
187	Արգելակային սկավառակի հղկում	
188	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	1000
189	ABS-ի հանում և տեղադրում	
190	ABS-ի վերանորոգում	
191	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	8000
192	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	8000
	10. Էլեկտրասարքավորում	
193	Էլեկտրասարքավորման վերանորոգում	25000
194	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	5000
195	Գեներատորի հանում և տեղադրում	6000
196	Նույնը V6-ի դեպքում	100
197	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	100
198	Գեներատորի վերանորոգում	6000
199	Մեկնարկիչի հանում և տեղադրում	6000
200	Մեկնարկիչի վերանորոգում	5000
201	Առջևի լապտերի հանում և տեղադրում	4000
202	Հետևի լապտերի հանում և տեղադրում	5000
203	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	5000
204	Վազքաչափի հանում և տեղադրում	5000
205	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	6000
206	Սաքերի պանելի հանում և տեղադրում	50000
207	Արագաչափի հանում և տեղադրում	6000
208	Ազդանշանի հանում և տեղադրում	4000
209	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	5000
210	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	8000
211	Ազդանշանային համակարգի տեղադրում	25000
212	Մագնիտոլայի տեղադրում	12000
213	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	4000
214	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	15000
215	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում	1000
216	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	1000
217	Էլեկտրական տվիչների փոխարինում	4000
218	Էլեկտրական անջատիչների փոխարինում	4000
219	Վառոցքի կռճի փոխարինում	3000
220	Վառոցքի մոմերի փոխարինում	
221	Կոնդիցիոների լիցքավորում	25000
222	Կոնդիցիոների վերանորոգում	25000
223	**11. Այլ ծառայություններ**	

224	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	6000
225	Ավտոմեքենայի լվացում	3000
226	Առջևի լապտերի փայլեցում	5000
227	Անիվի հանում և տեղադրում	2000
228	Անվադողի վերանորոգում	1000
229	Անիվի բալանսավորում	2000
230	Անիվի վալց	8000
231	CO-զոդման աշխատանքներ, *գին 1 քառ.սմ - ի համար*	2000
232	Խառատային աշխատանքներ	100
233	Փականագործի աշխատանքներ	8000
234	Քարշարկի ծառայություն *գին 1կմ, համար*	250
235	Սրահի քիմմաքրում	40000
236	Դիմապակու հանում տեղադրում	28000
237	Ռետինե գորգերի հավաքածու	90000
238	Ապակիների թաղանթապատում	70000
	SU-1,SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Հյունդայի County 3.5լ- 3.9լ. ավտոբուս
	1.Շարժիչ	
1	Շարժիչի բլոկ	5000
2	Շարժիչի գլխիկ	50000
3	Բարձիկ	55000
4	Շարժիչի գլխիկի միջադիր	40000
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	125000
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	10000
7	Շարժիչի փական դուրս մղող	12000
8	Շարժիչի փական ներս մղող	11000
9	Շարժիչի փականի խցուկ	2000
10	Ծնկաձև լիսեռ	50000
11	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	13000
12	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	18000
13	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	34000
14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	24000
15	Հենակային տափողակ	100
16	Մխոց	46000
17	Մխոցային օղակներ	108000
18	Ատամնանիվ	100
19	Ատամնավոր փոկ	
20	Շղթա	20000
21	Հիդրոծգան	
22	Հրիչ	
23	Հիդրոհրիչ	
24	Բաշմակ	
25	Հանգստարար	
26	Թափանիվ	100
27	Թափանիվի պսակ	100
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	9000
29	Շկիվ	100
30	Շարժաթև	5000
31	Կարտերի միջադիր	100